Բարև Ձեզ: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան անկախ հետազոտական կազմակերպությունը իրականացնում է հարցում՝ ուսումնասիրելու Հայաստանում մի քանի գերակա ոլորտներ՝ առողջապահություն, էներգետիկա և էներգախնայողություն, ղարաբաղյան հակամարտություն և կրթություն:

Ուսումնասիրությունն իրականացվում է Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով:

Հարցումն անանուն է և կտևի մոտավորապես 20 րոպե: Ձեր հեռախոսահամարն ընտրվել է համակարգչի կողմից պատահականության սկզբունքով: Խնդրում ենք մասնակցել հարցմանը, Ձեր ներդրումն ունենալով Հայաստանի համար կարևոր թեմաների շուրջ հանրության կարծիքի ուսումնասիրությանը:

Խնդրում ենք լինել առավելագույնս անկեղծ:

Համաձա՞յն եք մասնակցել այս հարցմանը:

☐ Համաձայն եմ մասնակցել

☐ Համաձայն չեմ մասնակցել *[Ավարտել հարցումը]*

## *ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ*

**Q1. Թվարկվածներից ո՞րն է առավելապես արտահայտում Կորոնավիրուսի վերաբերյալ Ձեր կարծիքը:** *[Ընտրեք միայն մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Կորոնավիրուսը գլոբալ համավարակ է և սպառնալիք միլիոնավոր մարդկանց կյանքի և առողջության համար | **1** |
| Կորոնավիրուսը հիվանդություն է, որով շատերն են վարակվում, այն նման է գրիպին և չի սպառնում մեծ թվով մարդկանց կյանքին | **2** |
| Կորոնավիրուսը հորինված է լրատվամիջոցների և հասարակական գործիչների կողմից | **3** |
| Չունեմ բավարար տեղեկատվություն, որպեսզի կողմնորոշվեմ/Չեմ հետևում | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q2. Որտեղի՞ց եք ստանում Հայաստանում Կորոնավիրուսի հետ կապված հիմնական տեղեկատվությունը:** *[Ընտրեք բոլոր հնարավոր պատասխանները]*

| | |
|---|---|
| Հեռուստացույցով, ռադիոյով, տպագիր մամուլով ներկայացվող նորություններից | **1** |
| Ինտերնետից՝ լրատվակայքերից, թերթերի կայքերից և սոցցանցերում դրանց էջերից | **2** |
| Ինտերնետից՝ վարչապետի և առողջապահության նախարարի, պաշտոնատար անձանց էջերից | **3** |
| Սոցցանցերից՝ տարբեր մարդկանց կողմից ներկայացված տեղեկատվությունից | **4** |
| Շրջապատից (ընկերներից, հարևաններից և բարեկամներից, ծանոթ բժիշկներից) | **5** |
| Տեղեկատվություն չեմ ստանում/չեմ հետևում | **6** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q3. Նշեք խնդրեմ, Կորոնավիրուսի հետ կապված հետևյալ տեղեկատվական աղբյուրների նկատմամբ Ձեր վստահության աստիճանը 1-ից 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չեմ վստահում, իսկ 5-ը՝ լիովին վստահում եմ:** *[Նշեք 0, եթե ծանոթ չեք կամ չեք հետևում տվյալ աղբյուրին]*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Առողջապահության նախարարության և պետական այլ գերատեսչությունների պաշտոնական հաղորդագրություններ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |
| Քաղաքական գործիչների և լրագրողների կողմից արված հայտարարություններ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |
| Հայաստանյան բժիշկներ/փորձագետներ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |
| Այլ երկրների բժիշկներ/փորձագետներ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |
| Միջազգային լրատվականների կողմից հրապարակվող տեղեկություններ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |
| Ընկերներ, հարևաններ և բարեկամներ | **1** | **2** | **3** | **4** | **5** | **0** |

**Q4. Անձամբ Դուք հիվանդացե՞լ եք կորոնավիրուսով:**

| | |
|---|---|
| Այո *(⇨ Q5.1)* | **1** |
| Ոչ *(⇨ Q5.2)* | **2** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] *(⇨ Q5.2)* | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] *(⇨ Q5.2)* | **99** |

**Q5.1. Ինչպե՞ս եք վարվել, երբ հիվանդ եք եղել Կորոնավիրուսով:** *[Ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները, տարբերակները չկարդալ]*
**Անցում ⇨ Q6.1**

| | |
|---|---|
| Զանգել եմ պոլիկլինիկա | **1** |
| Զանգել եմ հիվանդանոց/շտապ օգնություն | **2** |
| Զանգել եմ թեժ գիծ/Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ազգային կենտրոն | **3** |
| Գնացել եմ պոլիկլինիկա/հիվանդանոց | **4** |
| Դիմել եմ ծանոթ բժիշկի | **5** |
| Շատ վատ չեմ զգացել, հիվանդությունը ոտքի վրա եմ անցկացրել | **6** |
| Զբաղվել եմ ինքնաբուժությամբ | **7** |
| Այլ/Նշել | **8** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q5.2. Առաջին հերթին ինչպե՞ս կվարվեք, եթե կասկածեք, որ հիվանդացել եք Կորոնավիրուսով:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*
**Անցում ⇨ Q6.2**

| | |
|---|---|
| Որոշ ժամանակ անկողնային ռեժիմի կանցնեմ, մինչև ինքնազգացողությունս բարելավվի | **1** |
| Եթե շատ վատ չզգամ, հիվանդությունը ոտքի վրա կանցկացնեմ | **2** |
| Կինքնամեկուսանամ | 3 |
| Կզանգեմ պոլիկլինիկա, հիվանդանոց, թեժ գիծ, շտապ օգնություն | 4 |
| Միանգամից կգնամ պոլիկլինիկա, հիվանդանոց | **5** |
| Կդիմեմ ծանոթ բժշկի | **6** |
| Այլ/Նշել | **7** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q6.1 Անցե՞լ եք կորոնավիրուսի թեստ, երբ հիվանդ էիք կորոնավիրուսով:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Վճարովի թեստ եմ անցել | **1** |
| Անվճար թեստ եմ անցել | **2** |
| Չեմ անցել | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q6.2 Կորոնավիրուսով հիվանդ լինելու կասկածի դեպքում կանցնե՞ք կորոնավիրուսի թեստ:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Կանցնեմ, նույնիսկ եթե վճարովի լինի | **1** |
| Կանցնեմ, եթե թեստն անվճար լինի | **2** |
| Թեստ կանցնեմ միայն ծայրահեղ դեպքում, եթե ինձ շատ վատ զգամ | **3** |
| Ես չեմ վստահում թեստավորմանը և թեստ չեմ անցնի | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q7. Այն պահին, երբ Հայաստանում սկսվի պատվաստանյութերի կիրառումը, Դուք անձամբ կդիմե՞ք պատվաստման համար:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Այո (⇨ *Q7A)* | **1** |
| Ոչ (⇨ *Q7B)* | **2** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *Q8)* | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *Q8)* | **99** |

**Q7A1. Եթե այո, ապա ինչո՞ւ:**

| | |
|---|---|
| Որպեսզի ապահովագրեմ ինձ հիվանդանալու վտանգից | **1** |
| Քանի որ պարտադիր կլինի բոլորի համար և կկիրառվի համընդհանրորեն | **2** |
| Այլ/նշել | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q7A2. Իսկ եթե Ձեր ընտրությամբ լիներ, որ պատվաստանյութը կնախընտրեիք:**
*[Չ/կ. Չկարդալ, ընդունել հարցվողի կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Սպուտնիկ V (Ռուսաստան) | **1** |
| AstraZeneca (Անգլիա-Շվեդիա) | **2** |
| Մոդերնա (ԱՄՆ) | **3** |
| Ֆայզեր (Գերմանիա-ԱՄՆ) | **4** |
| CNBG/Սինովակ/Սինոֆարմ (Չինաստան) | **5** |
| Այլ/նշել | **6** |
| Տարբերություն չկա, միայն թե պատվաստվեմ | **7** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q7B. Եթե ոչ, ապա ինչո՞ւ:**

| | |
|---|---|
| Չեմ ընդունի, մինչև չլինեն տվյալ պատվաստանյութի անվտանգության երաշխիքներ | **1** |
| Ես ընդհանրապես չեմ վստահում պատվաստանյութերին | **2** |
| Այլ/նշել | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q8. Դուք պահպանու՞մ եք կորոնավիրուսից պաշտպանվելու կանոնները՝դիմակ կրել, հեռավորություն պահել և այլն:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Սկզբում խիստ պահպանում էի կանոնները, այնուհետև՝ ավելի քիչ էի պահպանում | **1** |
| Սկզբում չէի պահպանում կանոնները, այնուհետև ավելի շատ սկսեցի պահպանել | **2** |
| Ամբողջ ընթացքում պահպանել եմ կանոնները | **3** |
| Կանոնները պահելու հնարավորություն չունեմ | **4** |
| Չեմ գտնում, որ անհրաժեշտ է պահպանել կանոնները | **5** |
| Այլ/նշել | **6** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q11. Ինչպե՞ս կբնութագրեք կառավարության գործունեության արդյունավետությունը համավարակի տարածման ընթացքում:** *[Ընտրեք Ձեր կարծիքին ամենամոտ տարբերակը, մեկ պատասխան]*

| | |
|---|---|
| Շատ արդյունավետ | **1** |
| Ավելի շուտ արդյունավետ | **2** |
| Ոչ արդյունավետ, ոչ անարդյունավետ | **3** |
| Ավելի շուտ անարդյունավետ | **4** |
| Ընդհանրապես անարդյունավետ | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q12. Բավարարվա՞ծ եք արդյոք հետևյալ հաստատությունների ծառայությունների մատուցմամբ/ սահմանափակումների վերահսկումով կապված Կորոնավիրուսի դեմ պայքարի հետ:**

| | Միանշանակ այո | Ավելի շուտ այո | Ավելի շուտ ոչ | Միանշանակ ոչ | ԴՊ | ՀՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Առողջապահության նախարարություն | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |
| Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |
| Հիվանդանոցներ | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |
| Պոլիկլինիկաներ | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |
| Դպրոցներ/Մանկապարտեզներ | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |
| Աշխատավայրեր | 1 | 2 | 3 | 4 | 98 | 99 |

## *ԷՆԵՐԳԵՏԻԿԱ*

**Q13. Ձեր կարծիքով, Ձեր ընտանիքի էներգիայի (գազ, էլեկտրաէներգիա) ծախսը, հարևանների/մտերիմների ընտանիքների համեմատ…**

| | |
|---|---|
| Ավելի շատ է | **1** |
| Ավելի քիչ է | **2** |
| Շատ չի տարբերվում | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q15. Երբևէ մտածե՞լ եք որևէ բան ձեռնարկել Ձեր կացարանի էներգետիկ ծախսերը կրճատելու համար:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ոչ | **2** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q16. Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր ընտանիքի էներգետիկ ծախսերի գոյացման հիմնական աղբյուրները:** *[Ընտրեք մինչև երեք պատասխան]*

| | |
|---|---|
| Ջերմության արտահոսքը պատերից | **1** |
| Ջերմության արտահոսքը պատուհաններից | **2** |
| Ջեռուցման համակարգը | **3** |
| Տաք ջրի մատակարարման համակարգը | **4** |
| Լուսավորող սարքերը | **5** |
| Կենցաղային էլեկտրասարքերը | **6** |
| Այլ/նշել | **7** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q17A. Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը:** *[Ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Գազով ջեռուցման կաթսա | **1** |
| Էլեկտրական տաքացուցիչներ | **2** |
| Արևային տաքացուցիչներ | **3** |
| Յուղով տաքացուցիչներ | **4** |
| Գոմաղբ/աթար | **5** |
| Փայտ | **6** |
| Այլ/նշել | **7** |
| Չենք ջեռուցում | **8** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q17B. Ստորև նշված միջոցառումներից որո՞նք եք իրականացվել Ձեր կացարանում:** *[Ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Ջեռուցման համակարգի արդիականացում | **1** |
| Պատուհանների փոխարինում | **2** |
| Դռների փոխարինում | **3** |
| Պատերի ջերմամեկուսացում | **4** |
| Լամպերի փոխարինում | **5** |

| | |
|---|---|
| Կենցաղային էլեկտրասարքավորումների փոխարինում/արդիականացում | **6** |
| Նշվածներից ոչ մեկը | **7** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q18. Նշված գործողություններից ո՞րը կնպաստի Ձեր տանը էներգիա խնայելուն:** *[Ընտրեք բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Անջատել ոչ անհրաժեշտ լուսավորությունը | **1** |
| Անջատել/հոսանքազերծել չգործածվող էլեկտրասարքերը | **2** |
| Նվազեցնել գերջեռուցումը/գերհովացումը (կարգավորել ջեռուցման/հովացման ջերմաստիճանը) | **3** |
| Այլ/նշել | **4** |
| *(Չգիտեմ)* | **98** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q20. Ձեր տնային տնտեսությունում վերականգնվող էներգիայի սկզբունքով աշխատող ո՞ր սարքավորումներն եք կիրառում**: *[Ընտրել բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Արևային ջրատաքացուցիչ | **1** |
| Արևային ֆոտոէլեկտրական վահանակ | **2** |
| Կենսագազի ստացման սարք | **3** |
| Ջերմային պոմպ | **4** |
| Այլ/նշել | **5** |
| Չեմ կիրառում | **6** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q22. Ձեր կարծիքով, Հայաստանը էներգետիկ անվտանգության խնդիր ունի՞:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ոչ | **2** |
| Չգիտեմ ինչ է «էներգետիկ անվտանգությունը» | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

## *ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ*

**New_1: Ինչպե՞ս եք վերաբերում մեր տարածաշրջանում Հայաստանի և Ադրբեջանի միջև տրանսպորտային ուղիների բացմանը** [*Նշում. սա կարգավորվում է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ*]**:**

| | |
|---|---|
| Լիովին դրական | **1** |
| Հիմնականում դրական | **2** |
| Չեզոք | **3** |
| Հիմնականում բացասական | **4** |
| Լիովին բացասական | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_2: Հիմա կկարդամ երկու պնդում, խնդրում եմ նշել՝ որի հետ եք ավելի շատ համաձայն:**

| | |
|---|---|
| Մեղրիի միջանցքի գործարկումը վտանգ է ներկայացնում ՀՀ ազգային անվտանգությանը | **1** |
| Մեղրիի միջանցքի գործարկումը տնտեսական զարգացման հիմքեր է ստեղծում | **2** |
| Երկուսի հետ էլ համաձայն եմ [ՉԿԱՐԴԱԼ] | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_3: Որքանո՞վ եք վստահում ռուս խաղաղապահ ուժերին՝ Արցախի անվտանգության ապահովման հարցում:**

| | |
|---|---|
| Լիովին վստահում եմ | **1** |
| Հիմնականում վստահում եմ | **2** |
| Ոչ վստահում եմ, ոչ էլ չեմ վստահում | **3** |
| Հիմնականում չեմ վստահում | **4** |
| Բացարձակ չեմ վստահում | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_4: Ըստ Ձեզ կշարունակե՞ն ռուս խաղաղապահ ուժերը աշխատել Արցախում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության հնգամյա ժամկետը լրանալուց հետո:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ավելի շուտ այո | **2** |
| Ավելի շուտ ոչ | **3** |
| Ոչ | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_5: Ինչպե՞ս եք գնահատում Մինսկի խմբի գործունեության կարևորությունը Արցախյան հակամարտության հետագա կարգավորման գործընթացում:**

| | |
|---|---|
| Շատ կարևոր է | **1** |
| Ավելի շուտ կարևոր է | **2** |
| Ավելի շուտ կարևոր չէ | **3** |

| | |
|---|---|
| Ընդհանրապես կարևոր չէ | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_6: Տեսնու՞մ եք Արցախում նոր պատերազմի բռնկման ռիսկ:**

| | |
|---|---|
| Այո, մի տարվա ընթացքում | **1** |
| Այո, հինգ տարվա ընթացքում | **2** |
| Այո, տասը տարվա ընթացքում | **3** |
| Այո, տասը տարուց հետո | **4** |
| Ոչ | **5** |
| Պատերազմը չի ավարտվել | **6** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_7: Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ Լեռնային Ղարաբաղի/Արցախի հակամարտության վերջնական կարգավորման վերաբերյալ: Ասեք խնդրեմ՝ հետևյալ մոտեցումներից ո՞րոնք են ընդունելի Ձեզ համար:**
*[Ընտրեք մինչև երկու պատասխան, նշելով առաջին և երկրորդ տարբերակները]* *Տարբերակների ռոտացիա*

| | | |
|---|---|---|
| Արցախը պաշտոնապես լինի Հայաստանի մաս | **1** | |
| Արցախը լինի անկախ պետություն | **2** | |
| Ստեղծել հատուկ վարչական տարածք, որը միասնաբար կղեկավարվի Ադրբեջանի և Հայաստանի կողմից | **3** | |
| Արցախը լինի Ադրբեջանի կազմում՝ բարձր ինքնավարության կարգավիճակով | **4** | |
| Արցախը լինի Ադրբեջանի կազմում՝ առանց ինքնավարության | **5** | |
| Արցախը լինի Ռուսաստանի Դաշնության կազմում հատուկ կարգավիճակով | **6** | |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** | |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** | |

**New_8: Ղարաբաղյան հակամարտության հետագա կարգավորման առաջին քայլը պետք է լինի ...** *[Հ/Վ. ընտրել միայն մեկ տարբերակ]* *Տարբերակների ռոտացիա*

| | |
|---|---|
| Գերիների վերադարձը, ապա մնացածը | **1** |
| Արցախի կարգավիճակի հստակեցումը, ապա մնացածը | **2** |
| Արցախի ներկայիս սահմանների և բնակչության անվտանգության ապահովումը, ապա մնացածը | **3** |
| Տնտեսական և ապաշրջափակման խնդիրների լուծումը, ապա քաղաքական հարցերը | **4** |
| Այլ/Նշել | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q28. Ձեր կարծիքով, ղարաբաղյան հակամարտության հետագա կարգավորումը կախված է…** *[Ընտրեք մինչև 3 պատասխան]*

| | |
|---|---|
| Հայաստանի կառավարությունից | **1** |
| Արցախի կառավարությունից | **2** |
| Հայկական բանակից | **3** |
| Հայաստանի և Արցախի ժողովրդից | **4** |
| Ադրբեջանի կառավարությունից | **5** |
| Ադրբեջանի ժողովրդից | **6** |
| Համաշխարհային գերտերություններից (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, ԵՄ) | **7** |
| Տարածաշրջանային տերություններից (Թուրքիա, Իրան, Ռուսաստան) | **8** |
| Ռուսաստանի Դաշնության կառավարությունից | **9** |
| Միջազգային հանրությունից | **10** |
| ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունից | **11** |
| Նշվածներից ոչ մեկից | **12** |
| Այլ/Նշել | **13** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_9: Ըստ Ձեզ, հետևյալ երկրներից և կազմակերպություններից յուրաքանչյուրը արդյո՞ք պետք է շատ ներգրավված լինի, քիչ ներգրավված, թե ընդհանարպես պետք է ներգրավված չլինի Լեռնային Ղարաբաղի/Արցախի կոնֆլիկտի վերջնական կարգավորման հարցում:**

| | Պետք է շատ ներգրավված լինի | Պետք է քիչ ներգրավված լինի | Պետք է ընդհանրապես ներգրավված չլինի | ԴՊ | ՀՊ |
|---|---|---|---|---|---|
| Ռուսաստանի Դաշնություն | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| ԱՄՆ | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| Ֆրանսիա | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| Թուրքիա | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| Եվրամիություն | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| Իրան | **1** | **2** | **3** | **98** | **99** |
| ԵԱՀԿ Մինսկի խումբ | **1** | **2** | **3** | **98** | **99** |

**Q29. Որքանո՞վ եք հավատում հայերի ու ադրբեջանցիների համակեցությանը (համատեղ բնակությանը)՝ հաշվի առնելով Արցախյան երկրորդ պատերազմը:**

| | |
|---|---|
| Լիովին հավատում եմ | **1** |
| Որոշ չափով հավատում եմ | **2** |
| Որոշ չափով չեմ հավատում | **3** |
| Ընդհանրապես չեմ հավատում | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**New_10: Ըստ Ձեզ, ո՞րը պետք է լինի Հայաստանի ընդհանուր նպատակը Արցախի տարածքների հարցում:**

| | |
|---|---|
| Վերադարձնել մինչև պատերազմը եղած բոլոր տարածքները | **1** |
| Վերադարձնել Շուշին և Հադրութի շրջանը (նախկին ԼՂԻՄ-ի սահմաններ) | **2** |
| Պահպանել ներկա/այսօրվա սահմանները | **3** |
| Այլ/նշել | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

## *ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*

**Q33. Մասնակցե՞լ եք արդյոք հեռավար դասերին համավարակի ժամանակ:** *[Ընտրեք մեկ պատասխան] [Հ/Վ. հեռավար դասերին մասնակիցներ են համարվում ուսանողները, դպրոցականների ծնողները/խնամակալները]*

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Մասամբ | **2** |
| Ոչ *(⇨ D1)* | **3** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] *(⇨ D1)* | **99** |

**Q35. Ի՞նչ դժվարությունների/խոչընդոտների եք հանդիպել հեռավար կրթության կազմակերպման/հեռավար կրթությունից օգտվելու ընթացքում:** *[Նշեք բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Ինտերնետի բացակայություն/ցածր որակ | **1** |
| Համապատասխան տեխնիկայի կամ այլ գործիքների բացակայություն | **2** |
| Առողջական խնդիրներ (դժվար է երկար նստել, տեսողական խնդիրներ, այլ խնդիրներ) | **3** |
| Առանձնանալու հնարավորության բացակայություն | **4** |
| Դժվարություններ / խնդիրներ չեմ ունեցել | **5** |
| Այլ/Նշել | **6** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q36. Արդյո՞ք Ձեր մասնակցությամբ դասը/դասախոսությունը բովանդակային փոփոխություններ են կրել հեռավար լինելու պատճառով:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ոչ (⇨ *Q37)* | **2** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *Q37)* | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *Q37)* | **99** |

**Q36A. Եթե այո, ապա ինչպե՞ս:** *[Նշեք բոլոր հնարավոր տարբերակները]*

| | |
|---|---|
| Որոշ առաջադրանքներ կրճատվել են | **1** |
| Տրվել են հավելյալ առաջադրանքներ | **2** |
| Շեշտն ավելի շատ ինքնուրույն աշխատանքի վրա է դրվել | **3** |
| Այլ/Նշել | **4** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q37. Որո՞նք են ըստ Ձեզ հեռավար կրթության առավելությունները:** *[Նշեք երեք հիմնական առավելություն]*

| | |
|---|---|
| Ժամանակի խնայում | **1** |
| Գումարի խնայում | **2** |
| Ավելի լավ կենտրոնանալու հնարավորություն | **3** |
| Ավելի հարմարավետ մասնակցություն | **4** |
| Դասապրոցեսն անցնում է առանց «անկարգությունների» | **5** |
| Դասի ընթացքում յուրաքանչյուր աշակերտին/ուսանողին ավելի շատ ժամանակի հատկացում | **6** |

| | |
|---|---|
| Դասն անցնում է առանց միմյանց ընդհատելու | **7** |
| Ավելի նրբանկատ/քաղաքավարի ուսուցիչ/դասախոսներ | **8** |
| Ավելի հաճախ են դասին պատրաստ ուսանող/աշակերտներ | **9** |
| Բացակայությունների նվազումը | **10** |
| Ծնողի/ծնողների վերահսկողություն/օգնություն | **11** |
| Այլ/Նշել | **12** |
| Առավելություններ չկան | **13** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q38. Ըստ Ձեզ, որո՞նք են հեռավար կրթության թերությունները:** *[Նշեք երեք հիմնական թերություն]*

| | |
|---|---|
| Ժամանակատարություն | **1** |
| Չի ստացվում կենտրոնանալ | **2** |
| Յուրաքանչյուր աշակերտին/ուսանողին ավելի քիչ ժամանակի հատկացում | **3** |
| Հավելյալ դժվարություններ աշակերտի/ուսանողի գործնական հմտությունները զարգացնելու համար | **4** |
| Խմբային աշխատանքների կազմակեպման դժվարություններ | **5** |
| Աշակերտների/ուսանողների ձևական ներկայություն՝ դասապրոցեսին չներգրավվելով | **6** |
| Աշակերտների/ուսանողների խաբեություններ, թույլ վերահսկողություն | **7** |
| Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների մասնակցության դժվարություններ | **8** |
| Հեռավար կրթության հայալեզու հարթակների սակավությունը | **9** |
| Այլ/Նշել | **10** |
| Թերություններ չկան | **11** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q40. Կցանկանայի՞ք, որ համավարակը հաղթահարելուց հետո հեռավար կրթության տարրեր պահպանվեին դասապրոցեսում:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ոչ | **2** |
| Մասամբ | **3** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**Q39. Արդյո՞ք հեռավար կրթությունը նոր հմտություններ ստանալու հնարավորություն տվել է Ձեզ/Ձեր երեխային/երեխաներին:**

| | |
|---|---|
| Այո | **1** |
| Ոչ (⇨ *D1)* | **2** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *D1)* | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] (⇨ *D1)* | **99** |

**Q39.1 Եթե այո, ապա ի՞նչ հմտություններ:** *[Նշեք մինչև երկու պատասխան]*

| | |
|---|---|
| Կենտրոնանալու հմտություն | **1** |
| Դասը/դասախոսությունը կազմակերպելու ճկունություն | **2** |

| | |
|---|---|
| Համակարգչից օգտվելու կարողությունների զարգացում | **3** |
| Առցանց ռեսուրսներից՝ նյութերից, օգտվելու կարողություն | **4** |
| Այլ/նշել | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Շնորհակալություն համագործակցության համար: Մնացին մի քանի հարցեր զուտ վիճակագրական նպատակների համար:*

**D1. Սեռը.**

| | |
|---|---|
| արական | **1** |
| իգական | **2** |

**D2. Քանի՞ տարեկան եք.** |___|___|տ.

**D3. Ո՞րն է Ձեր ամենաբարձր կրթամակարդակը.**

| | |
|---|---|
| Տարրական կրթություն (լրիվ կամ թերի) | **1** |
| Թերի միջնակարգ կրթություն | **2** |
| Լրիվ միջնակարգ կրթություն | **3** |
| Միջնակարգ տեխնիկական կրթություն | **4** |
| Թերի բարձրագույն կրթություն | **5** |
| Բարձրագույն կրթություն | **6** |
| Հետբուհական գիտական աստիճան | **7** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**D4. Ձեր ներկայիս ընտանեկան դրությունը.**

| | |
|---|---|
| Երբեք ամուսնացած չեմ եղել | **1** |
| Ամուսնացած եմ | **2** |
| Ամուսնալուծված եմ | **3** |
| Այրի | **4** |
| Համակեցություն | **5** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**D5. Քանի՞ անդամից է բաղկացած Ձեր տնային տնտեսությունը.** |___|___|

որից չափահաս՝ |___|___|

որից անչափահաս՝ |___|___|

**D6. Ձեր զբաղվածության կարգավիճակը.**

| | |
|---|---|
| Աշխատում եմ լրիվ դրույքով (ներառյալ ինքնազբաղվածությունը) | **1** |
| Աշխատում եմ կես դրույքով՝ մեկ աշխատավայրում (ներառյալ ինքնազբաղվածությունը) | **2** |
| Աշխատում եմ կես դրույքով՝ մեկից ավելի աշխատավայրերում (ներառյալ ինքնազբաղվածությունը) | **3** |
| Չեմ աշխատում, աշխատանք եմ փնտրում | **4** |
| Չեմ աշխատում, աշխատանք չեմ փնտրում | **5** |
| Թոշակառու *[Եթե աշխատում եք, ընտրեք առաջին երեքից]* | **6** |
| Ուսանող *[Եթե աշխատում եք, ընտրեք առաջին երեքից]* | **7** |
| Տնային տնտեսուհի | **8** |
| Այլ/նշել | **9** |

| | |
|---|---|
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**D8. Այս իրավիճակներից ո՞րն է առավել լավ բնութագրում Ձեր տնային տնտեսության ներկայիս տնտեսական վիճակը:**

| | |
|---|---|
| Գումարը չի բավարարում սննդին | **1** |
| Գումարը բավարար է սննդի, բայց ոչ հագուստ գնելու համար | **2** |
| Գումարը բավարար է սննդի և հագուստի համար, բայց ոչ այնպիսի թանկարժեք ապրանքների համար, ինչպիսիք են սառնարանը, լվացքի մեքենան և այլն | **3** |
| Մենք կարող ենք գնել այնպիսի թանկարժեք ապրանքներ, ինչպիսիք են սառնարանը կամ լվացքի մեքենան | **4** |
| Մենք կարող ենք մեզ թույլ տալ գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք | **5** |
| ԴՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **98** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**D9. Բնակության մարզը:**

| | |
|---|---|
| Արագածոտն | **1** |
| Արարատ | **2** |
| Արմավիր | **3** |
| Գեղարքունիք | **4** |
| Լոռի | **5** |
| Կոտայք | **6** |
| Շիրակ | **7** |
| Սյունիք | **8** |
| Վայոց ձոր | **9** |
| Տավուշ | **10** |
| Երևան | **11** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

**D10. Բնակավայրի տեսակը**

| | |
|---|---|
| Քաղաքային | **1** |
| Գյուղական | **2** |
| ՀՊ [ՉԿԱՐԴԱԼ] | **99** |

*Շնորհակալություն մեր հարցմանը մասնակցելու համար:*